

ԴԱՂՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԲԵՆՏ ՔԱՂԱՔ

Դերբենտում հայերը ընակվել են անհիշելի ժամանակներից: Սասանյանների աիրապետության շրջանում ծորա պահակի պահպանությունը վստահված էր Հայաստանի Սյունյաց նախարարության ղորադնդերին, որոնք քաջարար մտրտնչում էին Հյուսիսային ռազմատենչ ցեղերի դեմ: Վիմագրագետ-պատմարտն Ս. Գ. Բարիսուղարյանը ջանացել է ապացուցել, որ միջն գարերում գոյություն է ունեցել «Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը», որտեղ աղգային պատկանելությամբ գերակշռել են Կուրի ձախափնյա աարածքներում ապրող հայերն ու աղվանցիները:

Հնագույն հայկական հուշարձաններ Դերբենտում և նրա շրջակայքում չեն պահպանվել: Դա մասամբ բացատրվում է այն հանդամանքով, որ իրեւ ռազմա-ստրատեգիական անցուղի, Դերբենտում (Չողում) կառուցվում էին առավելապես պաշտպանական նշանակության շինություններ: Այսաեղ ապրող հայ աղգարնակչությունն ակսած 17-րդ դարից աստիճանարար նվազում է: 1830 թվականին, Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ, Դերբենտն ուներ 50 հայ ընտանիք¹, ունեցել են եկեղեցի (Ս. Սմենափրկիչ) և Գրիգոր Լուսավորչի անունը կրող վանական միաբանություն: Վանական կառուցներից հատկապես աչքի է ընկել Ս. Գրիգոր եկեղեցին՝ կառուցված մեծամեծ քարերով, որը հետագայում պարսիկները վերածել են մղկիթի²:

Դերբենտահայերի քանակը գարձյալ ավելանում է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին, երբ մշտական ընակության համար այստեղ են տեղափոխվում ռազմաթիվ ընտանիքներ Արցախից, Շամալիից և Ղղլարից: Քաղաքի 16 հազար ընակիչներից մոտավորապես 1000-ը հայեր էին³, որոնք կառուցում են Ս. Աստվածածին Ակեղեցին, Հիմնագրում են Մարիամյան աղգային գպրոցը, ստեղծում ընթերցարան:

Այժմ Դերբենտում ապրում են սակավաթիվ հայեր:

ԴԵՐԲԵՆՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է ամրոցի ստորև՝ ըլլի հարթության վրա. Հնագույն հուշակոթողներ չունի, եղածը վերաբերում է 18-20-րդ դարերին, պահպանվում է հայ աղգարնակչության հոգատարությամբ, ցանկապատված է: Ստկայն դառն իրողությունը ցույց է տալիս, որ ամենաբարվոք վիճակում գտնվող հուշակոթողները շինարտրական աշխատանքների պատճառով կարող են անփութրուն ոչնչացվել նույնիսկ մեկ օրում, ահա այդ իսկ նկատառումով որոշեցինք անխտիր ընդօրինակել րոպոր հայերեն և մասամբ ոռուերեն տապանագրերը, որոնք իրեւ սկզբնաղյուրներ հավաստի տեղեկություններ են պարունակում հայ գաղթավայրերն ուսումնասիրող պատմարանների, աղգագրագետների, բանագետների և այլ մասնագետների համար:

1 Մ. Բժշկյան, էջ 406:

2 Նույն տեղում, էջ 407-408:

3 ՀՍՀ. Բ. 3, Երևան, 1977, էջ 362-363: